ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

01.04.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/42 գնման պայմանագրի

ք. Երևան «19» «06» 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԲՈՌՍԱ» ՍՊԸ-ն՝ ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Պողոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին՝ (այսուհետև՝ Կողմեր), ղեկավարվելով Գնումների մասին օրենսդրությամբ և հիմք ընդունելով 01.04.2026թ. կնքված N ԵՔ-ԳՀԱՇՁԲ-26/42 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը և **Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի** կողմից ներկայացված գրությունը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի հավելված թիվ 1-ով սահմանված «Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 15-րդ, 17-րդ փողոցներ և Ա,Բ,Գ,Ե թաղամասեր» հասցեների փոխարեն հիմք ընդունել «Երևան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 5-րդ, 6-րդ, 11-րդ, 9- րդ, 10-րդ, 17- րդ, 18-րդ, Նոր Զմյուռնիայի փողոցներում և Մասիս Ա. Այգեգործական տարածք» հասցեները:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած կողմերի իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.*Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	«ԲՈՌՍԱ» ՍՊԸ
Երևանի քաղաքապետարան	ՀՀ Կոտայքի մարզ,ք.Հրազդան,
ք. Երևան, Արգիշտիի փ. 1	Երևանյան խճուղի 141
ՀՀ ֆինանսների նախարարության	ՎՏԲ-Հայաստանյան բանկ ՓԲԸ
գործառնական վարչություն	Հ/Հ 16028029343400
ՀՀ 900022701230	ՀՎՀՀ 03031875
ՀՎՀՀ 02593108	
Վ.Պապիկյան ----------	Գ.Պողոսյան ----------
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ